# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3 84 62, 3 78 97,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-135/19
*19 ապրիլ 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու թիվ 08-Ա, 09-Ա, 10-Ա, 11-Ա, 12-Ա, 13-Ա և 14-Ա որոշումները:

Առդիր 9 թերթ:

4/19/2019

X

**Համայնքի ղեկավար՝** **Էդիկ Մանուկյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 08-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ԱՊՐԻԼԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2019-ի ապրիլի 15-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2019թ-ի ապրիլի 15-ի թիվ 03 նիստի

1. Շահումյան համայնքի բյուջեի կատարման 2019թ-ի I եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և ,,Շահումյան գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Վանաձոր-Դիլիջան մայրուղու 4-րդ կմ-ի աջ և ձախ մասերում գտնվող ծառերը էտելու մասին:
4. Շահումյան համայնքի ,,Փողոցների լուսավորության համակարգի ստեղծման,, սուբվենցիոն ծրագրին հավանություն տալու մասին:
5. Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու եվ հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին:
6. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող հողատեսքը վարձակալությամբ հատկացնելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 09-Ա

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019Թ-Ի I ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Ընդունել ի գիտություն Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 10-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ,,ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը; համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի ,,Շահումյան գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 2018թ-ի նոյեմբերի 22-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և ,,Շահումյան գյուղական համայնքի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 38-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թ-ի մայիսի 01-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2019 թվականի Ապրիլի 15-ի N 10-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16 :

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 280000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 210000 |
| 4 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 140000 |
| 5 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 135000 |
| 6 | Առաջատար մասնագետ | 4 | 135000 |
| 7 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 120000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 8 | Տնտեսվար | 1 | 110000 |
| 9 | Վարորդ | 2 | 95000 |
| 10 | Բանվոր | 1 | 90000 |
| 11 | Տեխնիկական աշխատող | 1 | 85000 |
| | Ընդամենը | 16 | 2 170 000 |

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2019 թվականի Ապրիլի 15-ի N 10-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 14:

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| <<ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ-ի՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 150000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 105 000 |
| 3 | Գրադարանավար | 1 | 105 000 |
| 4 | Խմբավար սպորտի | 1 | 90 000 |
| 5 | Խմբավար երգի | 1 | 90 000 |
| 6 | Բակապահ | 1 | 90 000 |
| 7 | Տեխնիկական աշխատող | 1 | 85 000 |
| <<ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ-ի՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | | | |
| 8 | Մեթոդիստ ու. գծով տնօրենի տեղակալ | 1 | 135 000 |
| 9 | Դաստիարակ | 1.12 | 99 000 |
| 10 | Դաստիարակի օգնական | 1 | 90000 |
| 11 | Տնտեսվար | 1 | 90000 |
| 12 | Խոհարար | 1 | 90 000 |
| 13 | Բուժքույր | 1 | 90 000 |
| 14 | Օժանդակ բանվոր | 0.5 | 90 000 |
| | Ընդամենը | 13.5 | |

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 11-Ա

ՎԱՆԱՁՈՐ-ԴԻԼԻՋԱՆ ՄԱՅՐՈՒՂՈՒ 4-ՐԴ ԿՄ-Ի ԱՋ ԵՎ ՁԱԽ ՄԱՍԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ԷՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հաշվի առնելով բնակչության և երթևեկության անվտանգության հանգամանքը և Շահումյանի համայնքապետարանի առաջատար մասնագետ Կարեն Սարգսյանի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյան համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Վանաձոր-Դիլիջան մայրուղու 4-րդ կիլոմետրի երկկողմյա հատվածում գտնվող ծառերի մայրուղու վրա թեքված ճյուղերը իրենցից վտանգ են ներկայացնում անցորդների, տրանսպորտի և մոտակա էլեկտրական լարերի համար:

Բնակչության և երթևեկության անվտանգության նկատառումներով համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը վերը նշված ծառերը էտելու համար:
Ծառերը էտելուց առաջացած փայտանյութը հատկացնել էտման աշխատանքներն իրականացնող անձանց, որպես աշխատանքների իրականացման համար փոխհատուցման ծախս:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 12-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ,, ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 42-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողոցների լուսավորության խնդիրն ընդգրկված է Շահումյան համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Տալ հավանություն ՀՀ կառավարության 31.01.2019թ. թիվ 62-Ն որոշմամբ հաստատված կարգով ներկայացված ,,Շահումյան համայնքի փողոցների լուսավորության համակարգի ստեղծման,, սուբվենցիոն ծրագրի հայտին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 13-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀայաստանիՀանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016թվականի հունիսի 02-ի թիվ 631-Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է

1.Ստեղծել Շահումյան համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով» ևհաստատել հանձնաժողովիանհատական կազմը.

Հանձնաժողովի նախագահ  Սենիկ Մանուկյան - Շահումյանի կրթամարզամշակութային համալիր ՀՈԱԿ-ի տնօրեն

տեղակալ  Կարեն Պողոսյան - Վանաձորի ՄԾՏԲ տեսուչ

քարտուղար՝  Ռաիսա Մինասյան - Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

անդամներ  Քրիստինե Հովհաննիսյան - Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Գոհար Մկոյան - Շահումյանի կրթամարզամշակութային համալիր ՀՈԱԿ-ի մեթոդիստ ուս. գծով, տնօրենի տեղակալ

Անահիտ Գագինյան - ՀՈԱԿ-ի գրադարանավար

2. Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 23-ի <<Շահումյան համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 23-Ա:

Կողմ -4  Դեմ -0  Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝**  ԵՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 14-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ու Մ Է

Վարձակալությամբ հատկացվում է հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամաս 1 լոտով:

- Լոտ 1 Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-084-0364-0002 ծածկագրի 0.85 հա հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության ճամբարի սպասարկման հողամաս: Մեկնարկային գինը 110000 (մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ: Մրցույթի մասնակցության վճարը 5000 դրամ, նախավճարը և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**